

Եւ ի միւսումն ամի ընդվզեալ Լեհցիք ոչ հնաղանդեցան տալ հարկս Օսմանցոց, վասն որոյ սրտմտեալ կայսրն առաքէ զօրս բազումսն ի վերայ աշխարհին Լեհաց միանգամ երկիցս եւ երիցս մինչեւ կարի նուազել եւ տկարանալ Լեհցոց, զի ոչ մնաց տեղի անկոխ, ուր ոչ եհաս ոտք Օսմանցոց եւ մարդակեր ազգին թաթարաց եւ ապա պոնուհետեւ ակամայ ետուն Լեհցիք զկէս իւրեանց աշխարհին ի ձեռս Օսմանցոց, զբերդս մանունս բազում եւ քաղաքք պարսպաւորք՝ Պատ, Ուման, ի ժիպոժ եւ զպարաշ անուն եւ զայլս ոմանս: Եւ եդին սահման ի մէջ երկոցունց զի մի մեղիցեն միւսանգամ առ իրեարս: Իսկ Յաճիկք յորոց եւ տիրեցին գաւառաց յայնմ աշխարհի եդին վերակացուս եւ պահպանս բերդից եւ ծառայս թագաւորական, որ ասեն ենկիչերի եւ աղայ եւ փաշայ. բայց յաղագս կեղծաւորութեան թեթեւացուցին զհարկս ռամկաց հարկատուաց, զի այնք որք ի ձեռս Լեհացոց բռնաւորաց նեղին գայցեն ի սոցա կողմն եւ այնու սակաւ սակաւ որսայցեն զժողովուրդ աշխարհին Լեհաց եւ հարստացոյսցեն զբաժին մասին իւրեանց: Յետ այսորիկ այլ իմն գործ հնարեցան Օսմանցիք, քանզի տեսին թէ ոչ բարւոք նուաճեն Ռուսք ընդ ձեռամբ Թուրք բռնաւորաց եւ խորշին ի նոցանէ յաղագս այլադաւան գոլոյն նոցա ի քրիստոնէական կրօնից եւ հաւատոց, բերեալ զՊուլտանայ պարոնն սահմանեցին լինել նոցա հաթման (ատաման) եւ զամենայն հասս եւ զիրաւունս նոցա նորին ձեռամբ հաւաքեսցեն եւ էր անուն պարոնին Յուգա:



ԱԿՆԱՐԿ ԱՐԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ:

Ա.

Քրիստոնէութեան Էրդ դարում պատմական առկարիզի վրայ երեւում է մի նոր ազգ միանգամայն եւ մի նոր կրօն, որոնք միմեանց վրայ յենուելով՝ անասելի արագութեամբ տարածուեցան Ասիայում, Աֆրիկայում եւ մինչեւ իսկ Եւրոպայում. այդ ազգը Արաբացիքն են, կրօնը՝ մահմէտականութիւնը: Արաբիայի անապատներից դուրս գալով, Մահմէտի երեք անմիջական յաջորդները, Աբու - բէքը, Օմար եւ Օթման, իրանց հրոսակներով ողողեցին Պաղեստինը, Ասորիքը, Պարսկաստանը, Եգիպտոսը, եւ այն ժողովուրդը որ դարերով իւր երկրում փախկուած՝ համարեա անծանօթ էր մնացել աշխարհին, հարիւր տարուան ընթացքում աւելի զարմանալի աշխարհակալութիւններ արաւ քան նոյն իսկ Հռոմայեցիք:

Պարսկաստանը առաջին երկրներից մէկն էր, որ Արաբացիք նուաճեցին եւ իրանց կրօնին դարձրին: Այս ընդարձակ թագա-

Լորութիւնը, որի անմիջական իշխանութեան տակ էր գտնւում Հայոց աշխարհի մեծագոյն մասը Արշակունեաց թագաւորութեան անկումից յետոյ, վերջերը այնպիսի թուլութեան էր հասել, որ մի թեթեւ հարուած բաւական էր նորան կործանելու: Արքայից արքայն, որից երբեմն դողում էին իւր հպատակները, այժմ իշխանների ձեռքին խաղալիկ էր դարձել և մինչև իսկ իւր գահի վրայ ապահով չէր: Այս վիճակի մէջ ընականաբար Հայերը սկսան փոքր ինչ ազատ շունչ քաշել: Սասանեան թագաւորները, որ անցեալի անօգուտ փորձերից չխրատուած՝ դեռ ևս յոյսերը չէին կորցրել Հայաստանի քրիստոնէութիւնը կրակաւաշտութեան փոխելու, Զրդ դարի վերջերից պարտաւորուեցան հրաժարուել այդ դիտաւորութիւնից, և այնուհետև պարսիկ մարզպանները, որ նոցա քաղաքակտնութեան գործիքներն էին, տեղի տուին Հայ մարզպանների, որոնց առաջինն եղաւ մեծանուն Սմբատ Բագրատունին՝ բազմայաղթ մականունանեալը, որ միանգամայն Պարսից զօրքի սպարապետութիւնն էլ ունէր իւր ձեռքին (592 թ): Բայց բռնակալ տէրութեան յատուկ է կասկածոտ լինել. քանի որ հզօր է՝ ահ ու սարսափով է իշխում, իսկ երբ իրան տկար է զգում՝ իւր ստուերից էլ է վախենում: Սմբատ բազմայաղթի երկու յաջորդները, Դաւիթ Սահառունին և Վարդապետիոց Բագրատունին, կասկածի տակ են ընկնում իբրև Յունաց կուսակիցներ և իրանց կեանքը վտանգի մէջ տեսնելով՝ ապաւինում են Յունաց երկիրը:

Այդ տարիները Պարսից թագաւորութեան վերջին տարիներն էին. ներքին խռովութիւնները և գահակալութեան համար մրդուած կռիւները յետին աստիճանի խեղճութեան մէջ էին ձգել նորան: Իշխանները փոխանակ խարխալեալ գահի շուրջը խմբուելով՝ աշխատում էին թագը միմեանց ձեռքից յափշտակել, այնպէս որ հինգ վեց տարուան ընթացքում ութ թագաւոր Կամանց յաջորդեցին: Վերջինն եղաւ Յազկերտ Գ. որ գահի վրայ մեռնելու յուսով՝ Արաքացոց զօրութեան վրայ կրթեցաւ և ըստ ոմանց՝ մինչև իսկ նոցա կրօնն ընդունեց: Այսպիսով Հայոց աշխարհը, որ երեք դար շարունակ Պարսից և Յունաց համար կռուածադիկ էր եղել, ինքն ըստ ինքեան ազատուեցաւ առաջինների իշխանութիւնից, բայց դեռ Յունաց

իշխանութեանն էլ չէր ենթարկուած, այլ տատանեալ վիճակի մէջ էր գտնվում: Ի՞նչ էր մնում անել Հայոց այս հանգամանքների մէջ: Ի՞նչ՝ եթէ ոչ, միմեանց հետ միաբանել և աշխատել նախ այն վտանգի առաջն առնել, որ սպառնում էր հարաւից մօտեցող թշնամին, և ապա մտածել երկրի քաղաքական կազմակերպութեան վրայ: Բայց այդ ժամանակի Հայերը արժանի չէին ազատութիւն վայելելու: Ազգի մեծամեծները իրարու հետ ընկած՝ միմեանց պատուին նախանձում, միմեանց հալածում էին, և եթէ գտնուէր մէկը, որ փորձեր այդ գլխավորութիւնների առաջն առնել (ինչպէս օրինակի համար Թեոդորոս Ռշտունին, որ աշխատում էր սթապիլ նախարարներին՝ ցոյց տալով նոցա, որ թշնամին արդէն կրկրի դռներին մօտեցել է), նորա խօսքը լսող չկար: Միով բանիւ, եսականութիւնը օտարական իշխանութեան շնորհիւ այնքան զօրացած էր նոյն ժամանակի հայ իշխանների մէջ, որ հասարակաց օգուտը մոռացութեան էր տուած և ամէն մարդ լոկ իւր անձնական շահերի վրայ էր մտածում:

Բ.

Ահա այս վիճակի մէջ էր Հայոց երկիրը, երբ Արաբացիք առաջին անգամ կոխեցին նորա սահմանները: 18,000 արաբացի Աբտրահամն զօրավարի տաշնորդութեամբ Ասորեստանի կողմից մտան և անարգել առաջ եկան մինչև Տարոն՝ ճանապարհին աւեր ու կոտորած սփռելով: Հայ նախարարները հեռուից ականատես եղան նոցա գործած անօրէնութիւններին և ամենեւին տեղերից չշարժուեցան, չնայելով որ առաջուց հրաւէր էին ստացել հայրենիքի այս նոր թշնամիների դէմ դէմք առնելու: Մէկը միայն կատարեց իւր պարտքը, այդ Տիրան Մամիկոնեանն էր, հռչակաւոր Գայլ Վահանի թուը, որ աներկիւղ դուրս եկաւ իրանից կրկնապատիկ և աւելի ոյժ ունեցող թշնամի առաջ և գուցէ յաղթութիւնը տանէր, եթէ դաւաճան Սահուռ Անձեալին իւր գնդով Արաբացոց կողմն անցած և սուրը իւր ազգակիցների դէմ դարձրած չլինէր: Տիրան կռուեցաւ Մամիկոնեանց յառուկ հերոսութեամբ, որոնք գիտէին յաղթել կամ մեռնել, և նա մեռաւ իւր հայրենիքի ազատութեան համար: Այն դաշտը՝ ուր ընկաւ նա հա-

մարեա իւր բաւոր ընկերների հետ, կոչուեցաւ Սաւրբ Բանակ, տխուր, բայց և քաղցր անուն, որ տասներկու երկայն դարերից յետոյ էլ պահեց, յաւիտեան կը պահէ Տիրանի հայրենասիրութեան յիշատակը, միանգամայն և իբրեւ մի կենդանի բողոք կը լինի ժամանակակից իշխանների վատթարութեան դէմ: Արդարձման ծարօնը և ուրիշ մերձակայ գաւառները ասպատակելով առաջ գնաց մինչև կաթողիկոսանիստ Դուին քաղաքը, որ կարճատեւ պաշարումից յետոյ անձնատուր եղաւ և անասելի անգթութիւնների մատնուեցաւ. հազարաւոր անմեղ մարդիկ կոտորուեցան, հոյակապ տաճարներ ու պալատներ կողոպտուեցան և այրուեցան, 35.000 հոգի էլ գերի տարուեցան (610 թ.):

Այս արշաւանքը լոկ իբրեւ մի նախապարաստութիւն էր երկրի վիճակին ծանօթանալու համար: Արաբացիք յետ քաշուեցան, բայց շուտով վերագարձան աւելի մեծ պատրաստութեամբ և եկան գրաւեցին Այրարատը՝ Հայոց աշխարհի սիրտը: Այնուհետեւի կատաղի պատերազմ՝ բացուեցաւ արաբական խալիֆների և Յուճաց կայսրների մէջ Հայաստանի տիրապետութեան համար, պատերազմ՝ որ մօտ կէս դար տեւեց և որի ընթացքում սոսկալի անգթութիւններ գործուեցան երկու կողմից: Այս հակառակութիւններին աւելի սընունդ տուին Հայերը, որոնք իրանց վիճակը թեթեւացնելու յոռով՝ երբեմն մէկ և երբեմն միւս կողմն էին թեքուում: Արաբացիներից դժգոհ լինելու գլխաւոր պատճառը մեր պատմիչների միաբան վկայութեամբ՝ նոցա պահանջած անտանելի հարկերն էին, որոնց ծանրութիւնից ազատուելու համար՝ Հայերը յաճախ ապստամբում էին նոցանից և Յուճաց էին յարում: Բայց և Յոյներից գոհ լինելու առիթ չունէին Հայերը, նախ՝ որովհետեւ նեղութեան ժամանակ հարկաւոր օգնութիւնը չէին գտնում նոցանից. կայսրները իրանց վարմունքով աշկարայ երեւցնում էին, որ լոկ Հայոց հպատակութեան արգասիքը ուզում են վայելել առանց մի էական սաշտպանութիւն ցոյց տալու նոցա: Դժգոհութեան երկրորդ և գուցէ աւելի մեծ առիթը Յուճաց կրօնական հետամուտութիւններն էին, որոնց պատճառով Հայերը մեծամեծ զրկանքներ քաշեցին նոցա երեսից: Այս կէտը մի փոքրիկ բացատրութեան կարօտ է:

Յայտնի է, որ Հայերը ի սկզբանէ անտի ճանաչեցին միմիայն առաջին երեք տիեզերական ժողովները, Նիկիայի և Կոստանդնուպօլսի ժողովներին անձամբ մասնակցելով և Եփեսոսի ժողովի որոշումներն ընդունելով: Այնուհետև գումարուեցաւ Քաղկեդոնի ժողովը, 451 ին: Հայերը ներկայ չգտնուեցան այդ ժողովին, որովհետև մինչդեռ Յոյնք և Լատինք աստուածաբանական նուրբ վէճերով էին ղրաղուած, Հայք պատերազմի դաշտում պաշտպանում էին քրիստոնէութեան գործը (Աւարայրի կռիւը): Յետոյ երբ այս ժողովի գայթակղական դէպքերը յայտնի եղան, երբ տեսնուեցաւ նոյնպէս որ նորա մէջ արծարծուած խնդիրները Հայոց եկեղեցուն օտար էին, սոքա՝ որ եկեղեցու նախնական պարզութեանը նախանձախնդիր էին, հեռու պահեցին իրանց Քաղկեդոնականներից: Բայց այս ձեռնտու չէր Յունաց կայսրներին, որոնք երկու եկեղեցիների դաւանական աարբերութիւնը գլխաւոր արգելք համարելով իրանց քաղաքական նպատակներին հասնելու, ամէն ջանք արին ընդունել տալու Հայոց Քաղկեդոնի որոշումները: Հայերը շուտով ըմբռնեցին այս միջամտութիւնների գաղտնի նպատակը, հասկացան որ այստեղ կրօնական միութեան վարագոյրի տակ ծածկուած է ազգային միութեան խնդիրը. ուստի յունական խարդաւանքներին վերջ դնելու համար՝ Բաբգէն կաթողիկոսի օրով, 591-ին, հրապարակաւ մերժեցին Քաղկեդոնի ժողովը: Սակայն կայսրները այնուհետև ոչ միայն չեն հրաժարուում իրանց դիտաւորութիւնից, այլ ընդհակառակն Հայոց նեղ վիճակից օգտուելով՝ ամէն տեսակ ճնշումներ են գործում և մինչև իսկ հալածանք հանում սոցա վրայ: Հերակլ կայսրը պարսկական արշաւանքից վերադառնալիս՝ Կարին քաղաքում մասնաւոր ժողով է գումարել տալիս յոյն և հայ եպիսկոպոսներից. ուր հրաւիրում է և ժամանակի Եզր կաթողիկոսին, սպառնալով սորան, որ եթէ չգայ, Յունաց բաժնի: Հայոց վրայ առանձին կաթողիկոս կը նստեցնէ: Եզր եկաւ և մասամբ կայսեր սպառնալիքներից վախեցած, մասամբ էլ չորախոստումներից հրապուրուած՝ Քաղկեդոնի ժողովն ընդունեց, որով և մեծ խռովութիւնների պատճառ եղաւ ազգի մէջ: Այս խռովութիւնները նորոգուեցան դարձեալ Արաբացոց առաջին արշաւանքների ժամանակ, երբ Կոստանդ կայսրը անձամբ

Հայաստան գալով՝ Ներսէս Գ. կաթողիկոսին, որ քիչ առաջ Դուինի ժողովով Քաղկեդոնականութիւնը մերժել էր, ստիպեց յունական արարողութեան համեմատ հաղորդուելու: Կայսեր թողած զօրքերը իրանց բռնութիւններով և գայթակհան վարմունքով այնչափ զղուեցրին Հայոց, որ սգբա չնայելով Կոստանդի սպառնալից հրովարտակին՝ բացէիբաց մերժեցին Յունաց հետ հոգեւոր հաղորդութիւն ունենալու, որով և առաջուանից աւելի նեղութիւնների ենթարկուեցան յոյն զօրականների կողմից:

Այս հանգամանքների մէջ Հայերը քրիստոնեայ Յոյներից լաւ համարեցին մահմետական Արաբացոց իշխանութեան տակ մընալ, երբեմն խաղաղ կեանք վարելով, երբեմն մաքառելով նոցա անիրաւութիւնների դէմ:

Դ.

Արաբացիք մէկ ու կէս դարից աւելի կառավարեցին Հայաստանը անընդմիջաբար իրանց կուսակալների ձեռքով (693-859), որոնց մեր պատմագիրները «*արաբ*», երբեմն նաև «*արա*» (էմիր) անունն են տալիս: Սոցա իշխանանիստ քաղաքն էր Դուին, ուր Պարսից տիրապետութեան ժամանակ նստում էին մարզպանները, և իրանց ձեռքի տակ ունէին օգնականներ՝ երկրի զանազան կողմերը ցրուած: Ոստիկանների գլխաւոր պարտաւորութիւնն էր՝ 1) հսկել Հայոց վրայ որ ամիրապետի իշխանութեանը հնազանդ մնան և 2) նշանակեալ հարկերը ժողովել և աւերութեան գանձարանն ուղարկել: Նոքա իրանց գործողութիւնների մէջ առաջնորդւում էին ընդհանրապէս կենդրոնական իշխանութիւնից սուացած հրահանգներով, բայց պատահում էին և այնպիսի ոստիկաններ, որոնք ամիրապետների կամքի հակառակ կամ նոցա պահանջածից աւելի հարստահարում ու կեղեքում էին ժողովրդին: Արաբացոց քաղաքակութիւնը Հայաստանի նկատմամբ մեծ տարբերութիւն ունէր պարսկականից: Մինչ Պարսիկները իրանց ժամանակին հետամուտ էին լինում ընդհանուր հաւատալիութեամբ երկու ազգերը միմեանց հետ ձուլել և երկու երկրներից մի անբաժան մարմին կազմել, Արաբացոց բոլոր ջանքն այն էր՝ որ Հա-

յաստանը հպատակութեան մէջ պահեն և որքան կարելի է աւելի օգտուին նորա հարստութիւններին: Ճշմարիտ է՝ բանք հաւատաւորութեան մասնաւոր դէպքեր այստեղ էլ են երեւում: Բայց գործա իբրեւ քաղաքական սկզբունք չէին կարող նկատուիլ: այլ իբրեւ մահմետական իշխանաւորների մոլեռանդութեան արդիւնք: կամ իբրեւ վրէժխնդրութիւն նոցա կողմից՝ հայ իշխանների յաճախակի հանած տպստամբութիւնների համար:

Այս խօսքերը ըստ երեւութին հակառակում են այն պատուէրին, որով ինչպէս յայտնի է: Մահմետ հրամայում է իւր հետևողներին իսլամութիւնը սրով տարածել: Արդարեւ Ղուրանը բացայայտ կերպով ասում է. «Սպանեցէք անհաւատներին ամէն տեղ ուր որ կը պատահիք նոցա. և դարձեալ թէ՛ «Եւ կոչուած եմ կռուելու անհաւատների դէմ. մինչև որ նոքա ասեն. «Ձկայ ուրիշ Աստուած բայց միայն Ալլահը» (խօսքերը արտասանելով նոքա կազատեն իրանց կեանքը և ստացուածքը): Բայց նոյն Ղուրանը այս խիստ պատուէրները մեղմացնում, ներողամտութեան է փոխում: Երբ խօսքը Հրէաների և քրիստոնեաների վրայ է գալիս. «Ասացէ՛ք գրքերն ընդունողներին և կոյրերին. ընդունեցէ՛ք իսլամութիւնը և կը լուսաւորուէք: Եթէ նոյս հակառակէն, + ու պարսպն է միայն + արդէ: Ապաւած գիրք Զեկէ Եւ ծառաներին *): Ունինք և մի ազգային աւանդութիւն (որին ձայնակից են և մեր պատմիչներից ոմանք): որ հաստատում է թէ նոյն ինքը Մահմետը (ըստ Ալիշանի՝ Ալին) կրօնական ազատութեան հրովարտակ է շրջորհել Հայոց. «անմոռաց երգմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս՝ համարձակ ունիլ զքրիստոնէութիւն, ասումէ Սամուէլ երէց: Այս ազատագիրը յայտնի է Դժ Մանշուր անուանով: զանազանուելու համար երկրորդ կամ փոքր մանշուրից, որով Մահմետ զօրապետը Սահակ Գ. կաթողիկոսի միջնորդութեանը զիջանելով՝ մոռացութեան տուեց Հայոց ապստամբութիւնը ու Վարդանակերտի ու Վանանդի կռիւների մէջ գործած կոտորածները:

*) Ղուրանի խօսքերը հանած են Դուկուայի (Ducoudray) Փրանսիացի մատենագրի քաղաքակրթութեան պատմութեան երկրորդ հատորից:

Այսպիսի դէպքերում, այսինքն երբ Հայերը գլուխ էին բարձրացնում և զէնք առնում իրանց ազատութիւնը ձեռք բերելու համար, չկար անգթութիւն որ Արաբացիք թոյլ չտային իրանց գործելու: Երկու գլխաւոր միջոց իբրեւ սկզբունք ընդունած էին սոքա իրանց տիրապետութիւնը Հայաստանի վրայ ապահովելու համար. նշանաւոր իշխանական տոհմերը գերեւաբուծեամբ կամ սպանութեամբ ոչնչացնել, որպէս զի երկիրը անառաջնորդ մնայ, և ժողովրդին ծանր հարկերով աղքատութեան մէջ պահել, որպէս զի ապստամբութեան վրայ մտածելու կարողութիւն չունենայ: Հէնց առաջին ոստիկանը՝ Աբգղլայ եղաւ այս նենգաւոր քաղաքականութեան առաջին գործիքը, որ յետոյ իւր յաջորդներն էլ մի քանի անգամ կրկնեցին. նախարարներին խաբէութեամբ բռնեց և շղթայակապ ուղարկեց ամիրապետութեան մայրաքաղաքը Դամասկոս: Իսկ եթէ չնայելով այս կանոնաւոր հալածանքներին՝ Հայերը դարձեալ ապստամբութիւն էին հանում, ո՛հ, այն ժամանակ Արաբացիք այնպիսի վրէժխնդրութեան միջոցներ էին ձեռք առնում, որ միայն նոցա անգթութիւնը գիտէր հնարել: Այսպէս, երբ յիշեալ Աբգղլայի գերեալներից ոմանք ճանապարհից փախչելով յետ դարձան և Վարդանակերտի կռւում ջարդեցին ու փախցրին իրոնց գերողին, և երբ սորա յաջորդը Մոհամադ նոյն անյաջողութեանը հանդիպեցաւ Վանանդում, Արաբացիք առ ժամանակ մեղմանալ ձեւացրին, որպէս զի աւելի լաւ խաբէն իրանց զոհերին, բայց յետոյ մոքերը դրին, ինչպէս ասում է ժամանակակից Ղեռնդ պատմիչը, միանգամից «ջնջել ի միջոյ ի բաց բառնալ (զազատատոհմն և զնախարարազունս Հայոց) և ունել զաշխարհս առանց կասկածանաց»: Այս անգթութեան գործը յանձնուեցաւ կատարելու Նախիջևանի Կաշմ կամ Կասրմ կողմնակալին, որ խարդախութեամբ իւր մօտ հրաւիրեց Հայ մեծամեծներին և զօրագլուխներին՝ իբրեւ թէ հաւատարմութեան երդում առնելու նոցանից: Եւ երբ նոքա միամտութեամբ եկան, կէսը Նախիջևանի և միւս կէսը Խրամի եկեղեցին տարան՝ որ հանդիսապէս երդում տան, դռները պինդ փակեց, կրակ տուեց և բոլորին այրեց: Այս աղէտալի դէպքը պատահեցաւ 705 թուականին, որ նոյն իսկ Արաբացիք սոսկալով անուանեցին Կրակի Կարէ:

Երկրորդ նեղութիւնը որ Արաբացիք տալիս էին Հայոց, ինչպէս արդէն ասացինք, խիստ հարկապահանջութիւնն էր, որի պատճառով էլ սոքա յաճախ ապստամբում էին, Դժբաղդաբար մեր պատմիչները ընդհանուր խօսքերով են նկարագրում Հայոց տուած հարկերի ծանրութիւնը՝ առանց որոշակի յայտնելու այդ հարկերի քանակութիւնը։ Այսպէս Ս. Ասողիկը պատմում է թէ Արդլայ ոստիկանը ոչ միայն կենդանի մարդիկներին, այլ և մեռելներին հարկ էր առնում։ «Մեծ վշտեր ու նեղութիւններ էր հասցնում և աղքատութեան մէջ ձգում ամէնին։ Ստիպում էր քահանաներին որ մեռելների թիւը յայտնեն, որպէս զի նոցա հարկը ընտանիքները հատուցանեն, և ամէնի վզին կապարէ կնիք էր կախ անում»։ Նոյնպէս Եգիտ ոստիկանի համար ասում է թէ «հարկը ոչ թէ իւրաքանչիւր տանին, այլ ամէն մի մարդուց էր պահանջում, այնպէս որ նախարարները և մեծամեծները աղքատութեան մէջ ընկան»։ Իսկ Հարուն ալ-Ռաշիդի օրով, Բորդ դարի վերջին քառորդին, ոստիկանների ծանր հարկապահանջութիւնը այն աստիճանի յուսահատութիւն է բերում Հայոց վրայ, որ 12,000 հոգի փախչում ապաւինում են Յունաց երկիրը։ «Իսկ սինլըօրքն որը մնացին յաշխարհս մեր, աւելացնում է պատմիչը, առ սաստիկ կարօտութեանն, անձնատուրք եղեն ի ծառայութիւն որդւոց Իսմայիլի, փայտակոտորք և ջրաբերք նոցին եղեալք»)։ Նոյնը պէտք է հասկանալ և միւս պատմիչների համար, որոնք թէև երբեմն դրամի անուն տալիս են, ինչպէս Դահլեյան և Ղուլայ, բայց չեն յայտնում թէ իւրաքանչիւր մարդ կամ ընդհանրապէս ամբողջ երկիրը որոշեալ ժամանակում որքան հարկ էր վճարում։ Նոյն իսկ դահեկանի արժէքը որոշ չէ մեզ համար, որովհետև հին ժամանակ կային ոսկի և արծաթի դահեկաններ՝ հարկաւ միմեանցից տարբեր արժուութեամբ։ Իսկ զուգան ինչ դրամ լինելը բոլորովին անյայտ է այսօր։ Հ. Ղ. Ալիշանը Սմբատ Ա-ի (Ժ-րդ դար) Արաբացոց հատուցած հարկը միմիայն իւր սեպհական երկրի համար, որ Յովհաննէս Կաթողիկոսը 16,000 դահեկան է դնում, նոր դրամի վերածելով 750,000 ֆրանկ է հաշուում։ Սորա վրայ աւելացնե-

(*) Ս. Ասողիկ, Գ, ԳԼ. Դ.

լով հայաստանի ուրիշ գաւառների հարկը մի արաքացի պատմէի բերած հաշուի համեմատ՝ 2,500,000 ֆր. է դնում: Սորանից դուրս է Տարօնի, Արզնի, Տիգրանակերտի և Եփրատի կողմերի հարկը, այնպէս որ բոլորը միասին 10 միլիոն ֆրանկի է հասցնում*): Եթէ այս հաշիւը ուղիղ է, տարակոյտ չկայ որ Հայերը ահագին հարկ էին վճարում Արաքացոյ, մանաւանդ այնպիսի ժամանակների համար՝ երբ դրամը անհամեմատ ավելի մեծ արժէք ունէր քան մեր օրերում:

Դ.

Մեր գաղափարը Արաքացոյ մասին թերի կը լինէր, եթէ միայն քաղաքական տեսակէտից նայէինք նոցա վրայ: Ընդհանրապէս ազգերի միմեանց հետ ունեցած յարաբերութիւնների մէջ երկու տեսակ ազդեցութիւն է նկատուում. դրական և բացասական ազդեցութիւն: Ամենահին ազգերից մէկը՝ որոնց հետ Հայերը բանուգործ են ունեցել, Ասորեստանցիքն էին: Արդ, Ասորեստանի աշխարհակալները իրանց անվերջ արշաւանքներով և միջամտութիւններով Հայոց երկրի ներքին գործերի մէջ՝ Հայոց տէրութեան բնական զարգացումը ընդհատեցին, որով այնուհետև այս երկիրը միշտ թոյլ մնաց և անկարող եղաւ պաշտպանուելու արտաքին թշնամիների դէմ, այս եղաւ Ասորեստանցոց բացասական ազդեցութիւնը Հայոց վրայ: Բայց միևնոյն ժամանակ այս անընդհատ յարաբերութիւնների արդիւնքն այն եղաւ՝ որ Հայերը այդ քաղաքակիրթ ազգի կրթութիւնը, արուեստները և մինչև իսկ գրութեան եղանակը սեպհականեցին. ահա այստեղ երևում է Ասորեստանցոց դրական ազդեցութիւնը Հայոց կեանքի վրայ: Եղել են արդարև և այնպիսի աշխարհակալ ժողովրդներ, որոնք միայն չարիք են հասցրել մեզ, միայն վնասակար ազդեցութիւն են ունեցել մեր կեանքի վրայ: Այսպէս են թաթարները, որոնք ոչ միայն մի լաւ բան չեն մտցրել Հայոց կեանքի մէջ, այլ եղածն քանդել ու կործանել են:

Նոյնը չէ կարելի հարկաւ ասել Արաքացոյ համար: Ը-րդ դարում, ինչպէս յայտնի է, խալիֆների ընդարձակ պետութիւնը

(*) Յուլիէ, Ա. եր. 452—453:

երկու ճիւղի բաժանուեցաւ, արեւելեան և արեւմտեան խալիֆայութեան. բայց այս բաժանումը վնասակար չեղաւ Արաբացոց յառաջագիմութեան համար: Ընդհակառակն՝ արաբական քաղաքակրթութիւնը միւսնոյն ժամանակ բարձրաստիճանի հասաւ Բաղդադի Աբասեանց արքունիքում և Վորդովայի Օմայեանց արքունիքում, և իւր պայծառութեամբ նսեմացրեց քրիստոնէական քաղաքակրթութիւնը, որ անկեալ վիճակի մէջ էր Արեւելքում և գեռ նօր էր ծնում Արեւմտքում: Ալ-Մանսուր, Հարուն ալ-Ռաշիդ և Ալ-Մամուն Աբասեանց օրով, Ը-րդարի վերջում և Թ-րդի սկզբում, Բաղդադը գեղարուեստների ու գիտութիւնների կենդրոն դարձաւ, և արաբական զէնքերը մահմէտականութեան իշխանապետների փառքն ու զօրութիւնը ամէն տեղ տարածեցին: Հարունը այնչափ էր սիրում գիտնականների ընկերութիւնը, որ երբէք առանց նոցա չէր ճանապարհորդում, մինչև անգամ պատերազմ գնալիս՝ հետն էր ման ածում նոցա. նա սահմանեց որ ամէն մզկիթի մօտ մի ուսումնարան լինի, որ մանուկներին ձրի ուսում մատակարարէ: Ալ-Մամունը ամէն տեղ որոնում էր թանկագին ձեռագիրները և առատաձեռնութեամբ էր վարձատրում թարգմանիչներին. նորա օրով 10,000 հոգի ուսում էին առնում մի միայն Բաղդադի բարձրագոյն գպրոցում:

Արաբացիք մշակեցին գեղարուեստները և գրականութեան զանազան ճիւղերը. բայց նոքա աւելի յաջողութիւն ունեցան գիտութիւնների քան գպրութիւնների մէջ: Նոքա ծաղկեցրին բժշկականութիւնը. յիշեալ խալիֆների օրով մօտ իննը հարիւր բժիշկ կար մի միայն Բաղդադում: Թուաբանութեան մէջ նոքա հնարեցին թուանշանները, որ այսօր ամէն ազգերը գործ են ածում և որոնք հռոմէական անյարմար թուանշանների տեղ բռնեցին: Հանրահաշիւը արաբական գիտութիւն է, ինչպէս որ ցոյց է տալիս նորա անունը (ալ-ջբր *algebre*). Նոյնը պէտք է ասել քիմիայի համար (ալ-քիմիա): Ել չենք յիշում սւրիշ գիտութիւնները, ինչպէս երկրաչափութիւնը, եռանկիւնաչափութիւնը, աստղաբաշխութիւնը, որոնք նոյնպէս քիչ բան պարտական չեն Արաբացոց:

Խնդիր է այժմ թէ այս ազգը իւր մտաւոր դանձերով ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ Հայոց կեանքի վրայ: Դժբաղդարաբար

շաա քիչ, և պատճառը պարզ է: Հայ կրթութիւնը և մատենագրութիւնը եկեղեցական անձանց ձեռքը լինելով, բնական է որ սոքա իրանց բոլոր ճիգը պիտի թափէին ժողովրդին հեռու պահելու տրաքական գրքերից, իրանք էլ պիտի խորշէին մի բան սեպհականելու այն գրականութիւնից, որ տարբեր կրօնական գաղափարներ էր քարոզում, վախենալով որ մի գուցէ Հայաստանի քրիստոնէութիւնը վտանգի ենթարկուի, մանաւանդ որ հրապոյրները պակաս չէին մահմետական իշխանաւորների կողմից Հայոց մեծամեծներին իրանց կրօնական հաւատալիքների կողմը հակելու: Այս երկիւղն անշուշտ չէր կարող ազդել արաբական գեղարուեստը, ուստի և տեսնում ենք որ Հայերը չեն դանդաղում սեպհականելու Արաբացոց ճարտարապետական ճաշակը, նոցա միւսիոնները (mosaigue) և նուրբ քանդակները, և բիւզանդական ճարտարապետութեան հետ խառնելով մի առանձին ոճ են ստեղծում, որ այսօր յայտնի է հայկական «ձ» անունով և որ գեռ ևս երևում է Անիի աւերակների վրայ, Իսկ գրականութեան և գիտութեան ազդեցութիւնը, այն էլ թոյլ կերպով, նշմարւում է միայն այն ժամանակ՝ երբ Հայերը ազատւում են Արաբացոց ազդեցութիւնից, այսինքն երբ քրիստոնէութեանը այլ ևս վտանգ չէր կարող սպառնալ նոցա կողմից: Այսպէս Գր. Մագիստրոսը, ԺԱ դարի երկրորդ կէտին, սեպհականեց Արաբացոց վանկական և յանգաւոր տաղաչափութիւնը, որ յաջորդ գարում Ն. Շնորհալու գրչի տակ կատարելագործուելով՝ հին հայկական տաղաչափութեան տեղը բռնեց: Դարձեալ Շնորհալու ժամանակակից Մխիթար Հերացին մեծ մասամբ արաբական բժշկարաններից քաղեց իւր «Ջերմանց գիրքը», որով բժշկականութեան հիմը դրեց Հայոց մէջ: Եթէ հայ մատենագիրները աւելի առատութեամբ քաղած լինէին այս հարուստ աղբիւրից, անշուշտ թէ մեր մատենագրութիւնը կը ճոխացնէին և թէ մանաւանդ գիտութեան զարգացմանը կը նպաստէին մեր մէջ: